ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՍՏԱՑՈՒԱԾ ԳՐՔԵՐ.

Ռումանահայոց ներկայն և ապագայն, գրեց Պետրոս քահ. Մամիկոնեան.—Կայաց 1895.—Պարունակում է խիստ կարևոր և հետաքրքիր տեղեկութիւններ Աւստրիոյ արևելեան նահանգներում, Բուլղարիայում և Ռումանիայում բնակող հայերի անցեալի և ներկայի մասին. Անցեալի նկատմամբ Արժ. Հեղինակն օգուտ է քաղել մի շարք հայերէն և օտար գրաւոր յիշատակարաններից ու արձանագրութիւններից, որոնք մեծ մասամբ անմատչելի են բանասէրների համար. իսկ ներկային ծանօթ է նա, ինչպէս երևում է, երկարամեայ անձնական փորձառութիւններով. որով նորա գրուածքը, չնայած մատենագրական ինչ ինչ թերութիւնների, հայ գաղթականութիւնների պատմութեան համար առանձին արժէք ունեցող մի գործ է. Զուր տեղը Տէր Հայրը ազգասիրական եռանդից մղուած իւր գրքի մէջ տեղաւորել է «Վեհափառ Խրիմեան Հայրիկի» և «Արմէնչի վանքի» այնպիսի պատկերներ, որոնք մի քանի դար առաջ տպուած գրքերում կամ Գ. բաժանման աշակերտի տետրակում միայն խորթ չէին երևայ.

Bibliotheca scriptorum græcorum et romanorum Teubneriana—Patrum Nicænorum nomina latine, graece, coptice, syriace, arabice, armeniace.—Sociata opera edideruntH. Gelzer, H. Hilgenfeld, O. Cuntz.—Lipsiae, 1898.—Այս կարևոր աշխատութիւնը, որ յանձն է առել յայտնի պատմաբան հայագէտ ուսուցչապետ Գելցեր, Իենայի համալսարանի ուրիշ երկու ուսուցչապետների՝ Հիլգենֆելդի և Կունցի գործակցութեամբ, նպատակ է ունեցել բոլոր մինչև այժմ յայտնի եղած տպագիր և անտիպ յիշատակարաններից քաղելով ներկայացնել Նիկիոյ ժողովի հայրերի անուանց լիակատար ցանկը. Լատիներէն, յունարէն, կոպտերէն, ասորերէն և արաբերէն յիշատակարանների հետ յառաջ է բերուած նաև հայերէնը 6 ձեռագիրների համեմատութեամբ, որոնցից երկու լաւագոյնները Մայր Աթոռի մատենադարանին են, և համեմատութիւնը մենք ենք հոգացել Պրոֆ. Գելցերի խնդրանքը. Աւելի ուշ մենք երկու ուրիշ ձեռագիրներ ևս գտանք և համեմատութիւնն ուղարկեցինք Մեծ. ուսուցչապետին, բայց նա չէր կարողացել այլևս օգտուել նոցանից և բաւականացել է միայն համառօտ ծանօթութիւն գնելով յառաջաբանի մէջ.

Կ. Վ.

Պատմութիւն 75-ամեայ գոյութեան Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի, որ ի Թիֆլիզ (1824-1899 թ.) Հատոր Ա. (1824—1850 թ.) վեց պատկերով.—Աշխատ. Աղեքսանդր Գ. Երիցեանց. Հրատ. Ներսիսեան Հայոց հոգևոր դպրոցի. Թիֆլիզ, 1898.

—Патріархъ всѣхъ Армянъ Нерсесъ V.-й. Съ приложеніями и съ фототипіями 1) Патріарха Нерсеса. 2) Кн. М. С. Воронцова, и 3) Е. К. Воронцовой. Тифлисъ, 1898:

—Վրաց պօէտ Ակակին հայերի մասին. Պրոֆեսսոր Ն. Մարր. «Նովոյէ Օբոզ.» լրագրից թարգմ. Ս. Հ.—Թիֆլիս, 1898.

— Շէլլուի սպանութիւնները. — «Նովոյէ Օբոզր.» լրագրից թարգմ. Ս. Հ.—Թիֆլիս, 1898.

—Ազգային մատենադարան. Իէ.—Մովսէս Խորենացու նորագոյն աղբիւրներու մասին. Գր. Խալաթեան. Վիեննա, 1898.

—Զգացմունքների աշխարհ (Խ. Աբովեանի երկերի առթիւ—արտ. «Լուսոյ» հանդիսից). Իս. Յարութիւնեանց.—Տփխիս, 1898.

—Զարա.—Իւրի Վ.ազի բէկ. թարգմ. Ե. Թ. Ս. Պետերբուրգ, 1898.

—Աշխարհագրութիւն Օսմանեան կայսրութեան (տարր. նախակրթարանի բարձր. դասընթացք, Ա. տարի—Ուսումն. խորհրդէն վաւերացուցած). Գ. Խաչկոնց.—Կ. Պոլիս, 1898.

—Լեւ Տալստոյ Կրէյցերեան Սոնատի վերջը. Մ. Կրիտ. թարգմ. Յ. Սարիկեանի.—Վաղարշապատ, 1898.

—Տեղեկագիր Հայոց Բարեգործական Ընկերութեան Կովկասում. 1896 և 1897:—Թիֆլիզ, 1898.

ԱՐԱՐԱՏ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՈՅ ՊԱՇՏՕՆԱԿԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

1898

Բաժանորդագին է՝ { Ռուսաստանում 4 ր.
Արտասահմանում 5 ր.

Կարելի է բաժանորդ գրուել կէս տարուայ համար և ստանալ թերթը յուլիս ամսից սկսած՝ վճարելով տարեկան բաժանորդագնի կէսը միայն։

Այն բաժանորդներից (յատկապէս քահանաներից), որոնք Արարատն առանձին փաթեթով ստանալու ցանկութեամբ կամ այլ քաղաք տեղափոխուելու պատճառով նոր հասցէ են ուղարկում, խնդրուում է ուղարկել 20 կոպէկի նամականիշ (մարկայ) և յայտնել իրենց հին հասցէն, թէ ո՞ր գործակալի կամ հոգևոր ատեանի միջոցով էին ստանում առաջ, որպէս զի հարկ չլինի երկու տեղ ուղարկելու։

Իսկ գործակալները՝ եթէ կամենում են, որ իրենց գործակալութեան մէջ եղած քահանաները առանձին ստանան, պէտք է հասցէները ուղարկեն, ոչ ուշ քան յ20 դեկտեմբերի։

Հասցէն Св. Эчміадзинъ, Типографическому комитету

Մ. ԱԹՈՌԻՍ ՏՊԱՐԱՆՈՒՄ ՎԱՃԱՌՈՒՈՒՄ ԵՆ ՀԵՏԵՒԵԱԼ ՆՈՐ ԳՐՔԵՐԸ.

	Ռ.	Կ.
Առակք Քռիլովի—Գաբր. եպ. Այվազեանց	»	80
Պարզ քարոզներ Ա. գրքոյկ. Էմ. քն. Ն.	»	15
» » Գ. »	»	20
» » Դ. »	»	20
Վկայաբան. Գորիա և Շմոնի	»	50
Սրբազան պատմ. հին կտակարանի Ամբրոսիոս Վ. Գալֆայեանցի	1	—
Նոյնը Նոր Կտակ. (պատկերազարդ)	»	50
Կրօնական բար. Խորհրդածութիւններ Ա.-ից ժ. գիրք իւրաքանչիւրը	»	20
Հայաստանեայց առաքելական ուղղափառ. եկեղեցին և իւր ս. կարգը Արշակ Տէր Միքելեանի	»	60
Տէր Պետրոս Ա. Դեռադարձ Կ. Կոստանեանց	»	10
Դաստիարակութիւն և ժառանգականութիւն Մ. Գիւյեօ թարգ. Ս. Մ.	»	60
Սոկրատայ Սքոլաստիկոսի Եկեղ. պատմ. աշխ. Մեսրոպ վրդ. Տ. Մովսիսեան	2	—
Նոյն անուանեալ Փոքր Սոկրատ	»	60
Ցիշատակարան ազգէտից Գրիգորի Խլաթեցւոյ Գր. Խալաթեանցի	»	15
Պարթևները Պարսկաստանում և նրանց յարաբերութիւնները Հայոց հետ Ն. Քարամեան	»	35
Նկարագրութիւն հոգևորական վարուց Յովասափու որդւոյ Թագաւորին Հընդկաց Մեսրոպ վրդ.	»	70
Ներբողեան Յաղագս Վարուց և Մահուան Ս. վարդապետին Մեսրոպայ Մեսրոպ վրդ. Տէր Մովսիսեանի	»	40
Բաղդատութիւն Տպ. Սոկրատի և Երուսաղէմի Ձեռագրի Սահակ եպիս. եւ Մեսրոպ վրդ.	»	10
Ցաւելուած Գրիգորի Խլաթեցւոյ պատմ. վիպ. աշխ. Գր. Խալաթեանց	»	3
Պարզ քարոզ. Բ. գրք. Բ. տպագր.	»	15
Լև Տալատոյի Կրէյցերեան Սօնատի վերջը թարգ. Յ. Սաղիկեանի	»	15

Մամուլի տակ է եւ շուտով լոյս կը տեսնի

Պատմութիւն Մատթէոսի Ուռհայեցւոյ